Յաշխարհս ենք տըրտում ամենքս ու խոցով մեր սիրտն է լըցել.
Ձեր խօսքըդ մեզ դեղ եղաւ, ձեր տեսո՛վըդ ենք խընդացել.
Հազար երնէկ այս աւուրս, որ մէկտեղ ենք մենք ժողովել:

ԺԶ.

Թագաւոր ու սուլդան 'ւ իշխանք, որ ի բարձր աթոռ էք նըստել,
Շատ ճորտ ու ծառայք եւ զօրք կան ի ձեր առջեւըդ կանգնել.
Ահեղ ու սաստիկ հրաման ու հանդէս էք դուք յօրինել.
Ուղորդ դատաստան արէք, զի ձեզ ա՛յլ ատեան կայ պահել:

ԺԷ.

Հըզօր թագաւորք 'ւ իշխանք որ դարպաս էք դուք յօրինել,
Չայուշ ու պահնորդ դընրել , զձեր երեսդ ի մարդոյ պահել,
Գանգատ ու զընրկած մարդիկ անճարակ են շատ շիւարել,
Դընրէք միտ ու դատ արէք, զերդ Աստուած են առ ձեզ եկել:

ԺԸ.

Շաղուած ես ի չորս իրաց, այդ ցեղ շէնքն ամուր չընլինի.
Օդընն հողուն ի՞նչ նըման, հուր ու ջուրն են խիստ ատելի.
Ի հակառակաց ստեղծած եւ եղած ես մարդ կենդանի.
Վերնայ օդն ու հուրն ու ջուրն եւ մարմինընդ դառնայ փոշի:

ԶԹ.

Երնէկ ես նորա ասեմ որ յաշխարհս ի սուգ կու կենայ,
Ձիւր մեղքն ի յիշումն ածէ, զօրն ի բուն նա նըստի ու լայ.
Արտասուքն սապոն լին, սեւութիւնն ըսպիտականայ,
Թէ չէ օր հարսնեցընն գայ, նա հանդերձ հարսին չունենայ:

Ի.

Ձաղընն գէմ բարի ասեն, տէր Յիսուս որ զայս հրամայէ.
Ձանհամն ինքն ի համ բերէ ու զնեխածն անուշացընէ.
Էնց մարդ որ շընորհք ունի, կա՛մ ուսմամբ կա՛մ ի բնութենէ,
Համեմ է հոգոց մարդկան ու զհիւանդ հոգիս բընժընշկէ:

ԻԱ.

Ձաղընն անհամ ո՞վ տեսել թէ լինի նա պիտանացու.
Ո՛չ աղբ է պարտէզն ածեն, ո՛չ է քար՝ պատընն շարելու.